

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍԵՆՏ-ԷՏԻԵՆՈՒՄ

Մայիսի 17, հինգշաբթի:

Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը ինքնաշարժով ժամանեց Սենտ-Էտիեն, որտեղ դիմավորվեց հայ համայնքի և պետական ու քաղաքային իշխանությունների բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից:

Ժամը 12-ին Հայոց Հայրապետը համայնքային մեծ սրահում հանդիպում ունեցավ ավելի քան 400 ներկաների հետ: Հանդիպման ժամանակ Հայոց Հայրապետը ներկաներին դիմեց հետևյալ ճառով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՃԱՌԸ ՍԵՆՏ-ԷՏԻԵՆՈՒՄ

Զէինք սպասեր, որ այսքան բազմամարդ համայնքի մը կհանդիպինք այստեղ: Կնայինք բոլորիդ, բոլորդ ալ հայեր եք, հարազատ զավակները մեր ազգին, մեր եկեղեցիին: Ձեր դեմքերուն վրա կտեսնենք գոհունակության ժպիտ, հուզում: Մեր չար բախտը այնպես տնօրինեց, որ դաժան ողբերգություններու հետևանքով մեր ժողովուրդի մեծ մասը տարբեր երկիրներու մեջ պանդուխտ ապրի:

Այսպիսով ստեղծվեցավ, առաջին համաշխարհային պատերազմեն հետո, Մեծ եղեռնեն հետո, հայկական սփյուռքը, որ գրեթե կեսն է մեր ամբողջ ժողովուրդին: Մենք թիվով հիմա երևի 6—7 միլիոն կանք: Փառք Աստուծո, նորեն կաճինք ու կշատնանք: Այսօր Հայաստանի մեջ արդեն երեք միլիոն հայություն կա: Կա նաև հայություն մը մեր դրացի երկիրներուն մեջ՝ մոտ մեկ և կես միլիոն: Շուրջ երկու միլիոն ալ՝ արտասահմանի մեջ:

Ահավասիկ այս պայմաններու մեջ է, որ Մայր Աթոռ ս. Էջմիածինը, իբրև պատմական կեդրոնը Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցվո, խաչը ձեռքին և սուրբ Ավետարանը մյուս ձեռքին, իր պատմական առաքելությունը կշարունակե, համախմբելու համար հոգևոր մակարդակի վրա ամբողջ մեր ազգը, ուր որ ալ գտնվին անոր զավակները:

Հայաստանյայց առաքելական եկեղեցին աշխարհի վրա ամենահին և ամենափառավոր եկեղեցիներեն մեկն է: Դուք գիտեք, որ հայ ժողովուրդը առաջիններեն եղավ որ իր սիրտը բացավ Քրիստոսի Ավետարանի լույսին և հիմնեց իր առաջին եկեղեցին՝ ս. Էջմիածնի տաճարը: Քրիստոնեությունը

պետական կրոն դարձավ սուրբ Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի օրով, 4-րդ դարու սկիզբը: Եվ հարյուր տարի հետո, մեր ազգը քրիստոնեական կրոնը այնքան իր սեփական հոգիին անբաժան մասը դարձուց, այնքան խորունկ ապրեցավ նոր հավատքը, որ ստեղծեց իր ազգային գիրն ու գրականությունը, որպեսզի ս. Գիրքը թարգմանե իր ազգային լեզվով և իր եկեղեցիներուն մեջ իր մայրենի լեզվով աղոթե:

Ահա այսպիսով երկրորդ հուշարձանը կանգնեցավ Հայաստանի հողին վրա ս. Մեսրոպի և ս. Սահակի ջանքերով, հորինումով հայկական այբուբենին և թարգմանությամբը սուրբ Գրքին:

Քիչ ժողովուրդներ աշխարհի վրա հին դարերուն իրենց լեզվով ս. Գիրքը թարգմանած են:

Այսպեսով, հետզհետե հայ ժողովուրդը համաշխարհային պատմության բեմի վրա սկսավ իր տեղը գրավել և նույնիսկ, երբ վտանգ սպառնաց հայկական նոր հավատքին Ե դարու կեսին, 451 թվականին, երբ պարսիկները հարձակեցան Հայաստանի վրա՝ նպատակ ունենալով քրիստոնեությունը ջնջել և պարտադրել իրենց կրակապաշտական կրոնը, հայ ազգը մեկ մարդու պես ոտքի կանգնեցավ՝ պաշտպանելու համար իր հավատքը, Քրիստոսի Ավետարանը և իր ազատությունը:

Վարդանանց հերոսամարտը աշխարհի վրա առաջին պատերազմն է՝ մղված քրիստոնեության պաշտպանության համար:

Մենք պարտավոր ենք ավելի լավ ճանչնալ ինքզինքնիս և հպարտ ըլլալ մեր անցյալով, մեր ազգի կատարած գործերով, ստեղծագործություններով, հերոսական պայքարներով՝ միշտ հանուն քրիստոնեական հավատքի, միշտ հանուն մեր ժողովուրդի ազատության:

Իբրև հայոց կաթողիկոս, Մեր պարտքը կհամարենք ամեն տեղ արթնցընել բոլոր հայերու գիտակցության մեջ այս ոգին, հպարտությունը հայ ըլլալու, հայ ապրելու այս աշխարհի վրա: Հազար յոթը հարյուր տարիներն ի վեր մեր ազգը շատ փորձություններու մեջեն անցած է, սակայն միշտ, վերջիվերջո, կարողացած է ինքզինքը գտնել, ոտքի կանգնիլ և տերը դառնալ իր եկեղեցիին և իր երկրին, իր բարոյական, ոգեկան ժառանգության և իր արդար իրավունքներուն: Հետևաբար դժվարությունները, որ կան այսօր նաև արտասահմանի հայության առջև, այս կամ այն չափով, երբեք պետք չէ տկարացնեն մեզ, պետք չէ հուսահատեցնեն մեզ: Ընդհակառակը, դժվարություններու հանդիպող բարոյական մարդը առավել կլարե իր ուժերը բնական կերպով:

Այսօր, փառք Աստուծո, դուք Ֆրանսայի մեջ նեղություններու չեք ենթարկվիր, կվայելեք ամեն նպաստավոր պայմաններ և ազատություններ, իբրև քաղաքացիները այս երկրին: Այո՛, ամեն ազատություն կվայելեք պայծառ պահելու համար ձեր կրոնական հավատքը և ձեր ազգային եկեղեցին, պահպանելու համար ձեր մայրենի լեզուն, ձեր պապենական ավանդությունները, ձեր բարոյական ըմբռնումները կյանքի մասին, ընտանիքի մասին, համայնական կյանքի մասին: Մանավանդ հայ լեզուն, որ հայը հայ պահելու ամենեն կարևոր ազդակներեն մեկն է: Բոլոր գաղութներու մեջ հայերը նույն ոգիով պետք է ապրին և պահպանեն, բոլորը միասին, իրենց հոգևոր միությունը սուրբ Էջմիածնով, իրենց հայրենաբաղձ զգացումները, սերը դեպի Մայր Հայաստան, որ արգասիքն է մեր ժողովուրդի ազատագրական պայքարներուն և իրականացած երազը մեր նահատակներուն:

Մենք կհավատանք, որ այսօրվա մեր մայր երկրի պայծառ իրականության և հետզհետե զորացող հիմքերուն վրա, Աստուծո օգնությամբ, հնարավոր պիտի ըլլա ապագային կենսագործումը մեր ազգի բոլոր արդար երազանքներուն:

Ահա ուրեմն, այսպիսի պատմական իրողության մեջ է, որ Մայր Աթոռ ս. Էջմիածին կաշխատի իր պարտքը կատարել Աստուծո առջև, մեր ժողովուրդի և մեր պատմության առջև, շարունակելով իր առաքելությունը: Մեր բաղձանքն է, որ արտասահմանի մեջ ամեն տեղ, թե՛ մեծ և թե՛ ներինի նման փոքր համայնքներու ծոցին մեջ հետզհետե ավելի ամրանա Հայաստանյայց առաքելական եկեղեցին, որ ամենադիմացկուն, ամենափորձված, ամենահզոր պատվանդանն է հայապահպանման արտասահմանի պայմաններուն մեջ:

Մենք երջանիկ ենք, որ այս ոգիով գործող մեր սիրելի եղբոր՝ տ. Սերովբե սրբազան արքեպիսկոպոսի ջանքերով և իր փոխանորդ տ. Դավիթ սրբազան եպիսկոպոսի հոգատարությամբ ահավասիկ իրականացած է արդեն Սենտ-Էտիենի և շրջակայքի հայության միասնությունը՝ հայ եկեղեցական կազմակերպությամբ: Եվ Մենք վստահ ենք, թե շուտով կկարողանաք իրագործել ձեր նվիրական ծրագիրը՝ աղոթքի ձեր Տունը ունենալու այս հարկի տակ:

Ահավասիկ հոգևոր և ազգային կյանքի կեդրոն մը, որուն բնակիչները պիտի ըլլաք դուք և պիտի գործակցիք ամենքդ, որպեսզի հետզհետե շեննա և պայծառանա ձեր աղոթքի Տունը և այս դահլիճը:

Այս առթիվ կշնորհավորենք ձեզ բոլորդ և կմաղթենք նախ Տ. Դավիթ սրբազանին և ապա համայնքային վարչության բոլոր անդամներուն և ձեզի բոլորիդ՝ ուժ, անսպառ եռանդ և հավատք ձեր սուրբ գործի նկատմամբ:

Սուրբ Էջմիածնեն կբերենք ձեզի օրհնված այս խաչքարը, որ հիմնաքարը ըլլա ձեր աղոթքի նոր Տունին:

«Ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամեն:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը ս. Էջմիածնից բերված մի խաչքար նվիրեց նոր կառուցվելիք մատուռում զետեղելու համար:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱՇԿԵՐՈՒՅԹ

Ժամը 14-ին Սենտ-Էտիենի հայ ազգային միությունը, ի պատիվ Հայոց Հայրապետի, կազմակերպեց մեծ ընդունելություն «Լը Ֆլոր» ռեստորանում: Ընդունելությանը ներկա էին Լուարայի նահանգի նահանգապետ Ժորժ Բադոն, Սենտ-Էտիենի քաղաքագլուխ Ժոզեֆ Սանգլըդոսը, Սենտ-Էտիենի կաթոլիկ եպիսկոպոս Պոլ Մարի Ռուսեն, հույն օրթոդոքս և այլ քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, տեղի ազգային միության վարչության անդամները՝ գլխավորությամբ պրն. Նուբար Թորոսյանի, և այլ պաշտոնական հրավիրյալներ՝ թվով 150 հոգի:

Շաշկերույթի ժամանակ ելույթներ ունեցան Սենտ-Էտիենի քաղաքագլուխը, Նուբար Թորոսյանը, Մանուկ Մանուկյանը, պրն. Բաբայանը, մոնսենյոր Ռուսեն:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետին ուղղված գեղեցիկ ճառով հանդես եկավ նաև Լուարայի նահանգի նահանգապետ պրն. Ժորժ Բադոն:

ԼՈՒԱՐԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԺՈՐԺ ԲԱԴՈՅԻ ՈՒՂԵՐՁԸ ՃԱՇԿԵՐՈՒՅԹՈՒՄ

Ձերդ Սրբություն,

Հանուն այն կառավարության, որին ներկայացնում եմ ես այս նահանգում, պատիվն ունեմ Ձերդ Սրբությանը հայտնելու բարիգալստյան իմ ամենաջերմ մաղթանքները Լուարայի այս շրջանը Ձեր այցելության առիթով:

Լուարայի շրջանը չարքաշ աշխատանքի, բայց միաժամանակ և հյուրընկալության երկիր է: Այս նահանգի և մասնավորապես Սենտ-Էտիեն քաղաքի բնակիչները հոչակված են իրենց հյուրասիրության ջերմությամբ, սրտաբացությամբ և պարզությամբ: Զանազան վայրերից եկած բնակչության միախառնումը, որ տեղի ունեցավ այս նահանգում արդյունաբերության արագ զարգացման հետևանքով, նպաստեց, որ ազգային տարբեր փոքրամասնությունների պատկանող բազմաթիվ մարդիկ, այս կամ այն ժամանակ, ներթափանցեն այս շրջանը և որոշեն վերջնականապես բնակություն հաստատել այստեղ:

Այսպիսով, հայկական համայնքը նույնպես ներդաշնակորեն միաձուլվեց այս նահանգի ծոցում: Անտարակույս, հարևան մյուս նահանգների համեմատությամբ, ինչպիսին է, օրինակ, Դրոմի նահանգը, որտեղ այցելելու է Ձերդ Սրբությունը մի քանի ժամ հետո և որտեղ ապրում են մեծ թվով հայեր, այս նահանգի հայկական համայնքը փոքրաթիվ է, բայց նա իր հետ բերել է քաջության և անձնազոհության հիանալի ավանդույթներ: Նա ավանդապահն է նաև ազատասիրական այն ոգու, որ Ֆրանսիան միշտ ճանաչել ու բարձր է գնահատել որպես հիմնական տիեզերական արժեք:

Նրա վճռականությունը պահպանելու ազգային իր խոր ինքնությունը, որ նա ժառանգել է իր նախնիներից և իր պատմությունից—որ, ավա՜ղ, այնքան ողբերգական է եղել հաճախ—արգելք չի հանդիսացել բնավ ֆրանսիացի ժողովրդի հետ նրա միաձուլումին ու շաղախումին, որը կատարվել է մշակութային տարբեր ավանդությունների և հավատալիքների հանդեպ փոխադարձ հարգանքի հիման վրա: Այսօր Լուարայի նահանգի հայկական համայնքը նահանգային մեր հասարակության բաղկացուցիչ մասն է կազմում՝ քաղաքացիական համահավասար իրավունքներով:

Ձերդ սրբության ներկայությունն այսօր Սենտ-Էտիենում մեծ պատիվ է ամբողջ մեր նահանգի համար: Ցանկանում եմ, որ Ձերդ սրբությունը մեր նահանգին տված իր այս կարճ այցելությունից վերադառնա լավագույն հիշողություններով, նահանգ, որտեղ եղբայրության և համերաշխության գաղափարները պահպանում են իրենց օրինակելի արժեքը: Այս առթիվ ուզում եմ նաև հայկական համայնքին հայտնել իմ սրտագին բարեմաղթությունները բարգավաճ և երջանիկ կյանքի:

Սույն ընդունելությունն ավարտվեց Վեհափառ Հայրապետի պատգամով և խմբովին երգված Տերունական աղոթքով: